

**ՔԱԺԻՆ 3. ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ****Մեթոդաբանական պարզաբանումներ**

3.1 ԼՂՀ 2015թ. մարդահամարի հարցաթերթում գետեղված (կամ առկա) կրթական մակարդակները համապատասխանեցվել են «Կրթության մասին» ԼՂՀ օրենքով սահմանված դրույթներին:

«**Տարրական**» կրթական մակարդակին են վերագրվել տարրական դասընթացը կամ տարրական դպրոցն ավարտած, սակայն ընդհանուր հիմնական կրթություն չստացած անձինք, ինչպես նաև հանրակրթական դպրոցի 5-9 դասարաններում սովորողները:

«**Հիմնական**» կրթական մակարդակին են վերագրվել հիմնական հանրակրթական դպրոցն ավարտած և համապատասխան ավարտական վկայական ստացած անձինք, ինչպես նաև ավագ դպրոցի 10-12 դասարաններում սովորողները:

«**Միջնակարգ**» կրթական մակարդակին են վերագրվել միջնակարգ հանրակրթական դպրոց (այդ թվում՝ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ), վարժարան, գիմնազիա և միջնակարգ հանրակրթական ուսումնական ծրագրեր իրականացնող այլ ուսումնական հաստատություններ ավարտած անձինք:

«**Նախնական մասնագիտական (արհեստագործական)**» կրթական մակարդակին են վերագրվել հիմնական ընդհանուր/ հանրակրթական և միջնակարգ ընդհանուր/հանրակրթական կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական կրթություն ստացած (արհեստագործական, պրոֆտեխնիկական, ճյուղային պրոֆեսիոնալ, տեխնիկական ուսումնարաններ ավարտած) և համապատասխան ավարտական վկայական ստացած անձինք:

«**Միջին մասնագիտական**» կրթական մակարդակին են վերագրվել տեխնիկում, քոլեջ կամ դրանց հավասարեցված այլ պետական և ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն (մանկավարժական, բժշկական ուսումնարան և այլն) ավարտած՝ միջին մասնագիտական որակավորում և համապատասխան ավարտական վկայական ստացած անձինք:

«**Բարձրագույն մասնագիտական**» կրթական մակարդակին են վերագրվել պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա ավարտած, ինչպես նաև բակալավրի, դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի աստիճան ստացած անձինք:

«**Հետբուհական մասնագիտական**» կրթական մակարդակին են վերագրվել ասպիրանտուրա, ինտերնատուրա, օրդինատուրա ավարտած և համապատասխան ավարտական վկայական ստացած անձինք:

«**Գիտության թեկնածու**» կամ «**Գիտության դոկտոր**» գիտական աստիճաններին են վերագրվել համապատասխան գիտական աստիճան ստացած անձինք:

«**Չունի տարրական կրթություն**» մակարդակին են վերագրվել տարրական կրթություն չունեցող 6 և բարձր տարիքի (ինչպես սովորող, այնպես էլ չսովորող) անձինք: Նրանցից.

- գրաճանաչ են համարվել այն անձինք, ովքեր գիտեն որևէ լեզվով կարդալ ու հասկանալ կարդացածի իմաստը և գրավոր նկարագրել իրենց առօրյա կյանքի որևէ պարզ իրողություն),
- ոչ գրաճանաչ են համարվել այն անձինք, ովքեր չգիտեն ո՛չ գրել, ո՛չ կարդալ, ինչպես նաև կարող են միայն կարդալ, կամ գրել սովորած ծիսական արտահայտությունները:

Հեռակա և դրսեկային կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ, ինչպես նաև էքստեռն ավարտածները վերագրվել են համապատասխան ուսումնական հաստատություն (կամ համապատասխան ուսումնական ծրագրեր) ավարտածներին:

Ընդհանուր կրթություն չսովող ուսումնական հաստատություններ ավարտածները (վերապատրաստման և վերաորակավորման դասընթացներ և այլն) վերագրվել են այն կրթությանը, որը նրանք ստացել են մինչ այդ դասընթացներ հաճախելը:

### 3.2 Ուսումնական հաստատության տեսակը

Միջնակարգ կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում.

- **«Տարրական դպրոցում»** սովորողներին վերագրվել են 1-4-րդ դասարաններում սովորողները,
- **«Միջին դպրոցում»** սովորողներին վերագրվել են 5-9-րդ դասարաններում սովորողները,
- **«Ավագ դպրոցում»** սովորողներին վերագրվել են 10-12-րդ դասարաններում սովորողները:

Մասնագիտական կրթական ծրագրերն իրականացվում են.

**«Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում»** սովորողներին վերագրվել են հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր հանրակրթական կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող (արհեստագործական, պրոֆտեխնիկական, ճյուղային պրոֆեսիոնալ) ուսումնական հաստատություններում, քրեակատարողական կենտրոններում սովորողները:

**«Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում»** սովորողներին վերագրվել են պետական և ոչ պետական տեխնիկումներում, քոլեջներում և դրանց հավասարեցված միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող այլ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (մանկավարժական, բժշկական, տնտեսագիտական քոլեջ և այլն) սովորողները:

**«Բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունում»** սովորողներին վերագրվել են պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում (ինստիտուտներում, ակադեմիաներում, համալսարաններում, կոնսերվատորիայում և դրանց հավասարեցված բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող այլ ուսումնական հաստատություններում) սովորողները:

**«Հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատությունում»** սովորողներին վերագրվել են ուսումնական կենտրոններում՝ ԲՈՒՀ-երի, գիտական հիմնարկների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում համապատասխան կրթական ծրագրերով, ինչպես նաև դոկտորանտի ծրագրով սովորողները:

**«Զի սովորում»** սյունակում ամփոփվել են 6 և բարձր տարիքի որևէ ուսումնական հաստատությունում չսովորողները: